

ձէնը յերկինս, սոյնպէս եկեսցէ զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս» (Գործք, Ա. 11): Թէոդոսի Ժամանակ, յոյները այս հովիտը կը կոչեն Pyrinos, Հովիտ Կրակի: Այսօր ալ, Յոբայ քրհորհեւ անդին կը կոչեն Ուասի ել Նար, Հովիտ Կրակի: Յոբայ քրհորին հիւսիսային կողմը, արաբները կը կոչեն Ուասի Սիլուանի, Սելովամի աղբիւր կամ Ուասի Սիքքի Մարիամ: Յովսափատի կամ Կեդրոնի Չորին այս ծանօթութիւնները տալէ յետոյ կը սկսինք գրել նոյն տեղւոյն աւանդութիւնները:

1. Ս. Սեփանոսի քարկոծման տեղը. — Բացի մեր յիշած աւանդութենէն (էջ 138), կը յիշուի նաև ուրիշ մը, որուն համաձայն՝ արեւելեան և արեւմտեան քրիստոնեաները Նախավկային քարկոծման տեղը կը պատուեն վաղեմի սանդուղին ստորոտը, որ Տաճարին մօտ կ'իջնէ Յովսափատի ձորը: Արդէն յիշած ըլլալով այս աւանդութեան մասին պատկան վկայութիւնները, կ'աւելցնենք միայն Սիլվիայի կամ էթէրիայի վկայութիւնը որ կը հաստատէ թէ Ս. Ստեփանոսի նահատակութեան տեղն է «հանդէպ Գեթսեմանի» (Bar. gd. էջ 156):

2. Գեթսեմանի. — Մատթէոս և Մարկոս Աւետարանիչները զիւր կը կոչեն Գեթսեմանին, իսկ Յովհաննէս պարտեզ. հաւանաբար որմապատ այգի մը՝ որ իր հովանիով զօլութիւն կուտար ամրան տաք օրերուն: Գեթսեմանի անունը կը նշանակէ իւղի մամուլ, որով կը հասկցուի թէ հոս տնկուած էին ձիթենիներ: Յիսուս շատ անգամ հոս կուգար իր աշակերտներով. «Եւ աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի՝